

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

(Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Պարագաղաբացիք գիտում են ուղղակի
Тифлисе. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մենք անշնորհ ենք: — Ներքին տեսու-
թիւն: Գաւառական թղթակցութիւններ: Նամակ
Շուշուց: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—
Արտաքին տեսութիւն: Բէկլիա: Նամակ
Աւստրիայից:—Մշակիչ հեռագիրներ:—Յայտարա-
րութիւններ:

ՄԵՆՔ ԱՆՇՆՈՐՀ ԵՆՔ

Ամեն բանի մէջ շնորհալի է
հայր, ամեն բանի մէջ յառաջա-
դէմ և ճարպիկ է, բայց մի բանի
մէջ շնորհ չունի:—Նա իր ունե-
ցած բարեմասնութիւնները, իր
կատարած սխաւագործութիւնները
երևան հանելու, ուրիշներին ցոյց
տալու և նրանց համեմատ յար-
գանք և պատիւ պահանջելու չը-
նորհ չունի: Ինչ որ գործել է
նա, ինչ որ կատարել է, միշտ
մնացել է անյայտ և մոռացվել է
ազգերի յիշողութիւնից: Այսին-
չե անգամ չը կարողացաւ իր
պատմութիւնը մտցնել հին, բա-
ղաբակիր ժողովրդի պատմութեան
շարքում, թէև ինքը նրանցից մե-
կն է եղել:

Ուրիշները իրանց լուրց ուղտ
են շնորհ և աշխարհին ցոյց են
տալիս, բայց մենք մեր ուղտերը
թաղցնում ենք: Այդ առաջ է
գալիս ոչ այնքան հայի համես-
տութիւնից, որքան նրա անհո-
գութիւնից:

Յունաստանի անկախութեանը
նպաստեց ոչ այնքան այդ ազգի
արիւնը և ազատասէր եռանդը,
որքան այդ երկրի աւերակների
բեկորները, որոնք, որպէս հնու-
թեան և ճարտարութեան ար-
դիւնք, սփռվեցան ամբողջ Եւրո-
պայում: Եւրոպայի աշխարհը մի-
տածեց թէ ափսոս է, որ մի
այսպիսի հանճարաւոր ազգ կորչի
և ոչնչանայ վայրենի թուրքերի
ձեռքում: մի ազգ, որ այնքան մեծ
ծառայութիւններ է մատուցել
մարդկութեանը թէ իր արհես-
տով և թէ իր գիտութիւնով:

Մեր լրագրութիւնը մի բանի
ամիս առաջ հրատարակեց, թէ
առաջիկայ տարվայ մէջ Թիֆլի-
սում կազմվելու է հնագէտների
Ժողով, և հրաւիրեց ձեռնհաս ան-

ձինքներին պատրաստել այդ Ժո-
ղովի համար հայոց հնութեան վե-
րաբերեալ հետազոտութեան նի-
ւթեր: Բայց տակաւին, որքան
մեզ յայտնի է, մի նշանաւոր
պատրաստութիւն չէ եղել:

Ի նկատի ունենալով այն, որ
մի այսպիսի Ժողով մեր կողմե-
րում առաջին անգամ է գումար-
վում, և պիտի հետազոտել կով-
կասեան ազգերի կուլտուրական
առանձնութիւնները,—հայերը, որ
միշտ առաջնակարգ դեր են խա-
ղացել այդ երկրի պատմութեան
մէջ, պէտք է աշխատէին ցոյց
տալ իրանց հնութեան յիշատա-
կարանները, որով կը յայտնվի,
թէ իրանք ինչ տեղ էին բռնում
կովկասեան ցեղերի մէջ: Այսպի-
սի Ժողովները յաճախ չեն կրկն-
վում, և գիտութեան առջև ի-
րանք հայերը պարտական կը մը-
նան, երբ իրանց մասին ոչինչ չեն
ցոյց տայ, և միշտ անյայտ կը
մնան, որպէս մինչև այսօր մնա-
ցել են:

Մեզանից աւելի ստոր և ա-
ւելի աննշան ցեղերի գործիչները
եռանդով աշխատում են, և մեծ
պատրաստութիւններ են տեսնում
հնագէտների Ժողովի համար: Ինչ
կը լինի, երբ Ժողովը կը վերջանայ
և հնագէտները աւելի բարձր
կարծիք կը կազմեն, օրինակ, վրա-
ցիների մասին և հայերը կը մնան
անյայտ: Չէ՞ որ, նրանց կարծիքը
կը տարածվի ամբողջ լուսաւոր
աշխարհում:

Մեր մէջ միայն մէկ մարդ է
աչքի ընկնում, որ այդ Ժողովի
համար աշխատում է,—պ. Երի-
ցեան: Իսկ մեր այն երեւելի հնա-
գէտները, որոնք Մասկովայում և
Ս. Պետերբուրգում փառք են վա-
յելում, որոնք հայերի վրա խօսե-
լիս միշտ եւրոպական աղբիւրնե-
րին են դիմում և իրանցից մի նոր
միտք չեն յայտնում,—այդ գիտ-
նականները իրանց տեղում ան-
շարժ նստած են, և չեն մտա-
ծում, որ գոնէ այժմ որ և իցէ
օգուտ բերէին իրանց հայրենիքին:

Մեզ պատահեց այս օրերում
լինել պ. Բիւրքշեանի արհեստա-

նոցում և տեսնել նրա լուսանը-
կարչական աշխատութիւնները, ո-
րոնք գլխաւորապէս առնված են
Անի քաղաքի տեսարաններից: Պ.
Բիւրքշեանը մօտ հինգ ամիս ան-
ցուցել է Ռազրատունեաց մայրա-
քաղաքի աւերակների մէջ և հա-
նել է բոլոր հնութիւնների պատ-
կերները, ինչ որ կարողացել է ա-
զատ մնալ ժամանակի և մահմե-
տական բարբարոսութեան կոր-
ծանիչ ձեռքից:

Պատկերները ներկայացնում են
խրաբանչիւր մի աւերակ ամբող-
ջապէս վեր առած, և նրա ման-
րամասները (դետալ) առանձնա-
պէս վերառած: Ոչ մի արձանա-
գրութիւն, ոչ մի խորտակված
սիւն, ոչ մի կամարի մնացորդը
առանց ուշադրութեան չէ թող-
ված: Մեռած քաղաքը ամբողջու-
թեամբ կենդանանում է պ. Բիւր-
քշեանի պատկերների մէջ: Շըշ-
տութեան, պարզութեան և ար-
հեստի կողմից, պատկերները ան-
համեմատ գեղեցիկ են:

Ի նկատի ունենալով այն հանգա-
մանքը որ առաջիկայ տարում
պէտք է կազմվի Թիֆլիսում հնա-
գէտների Ժողով, յոյս ունենք, որ
պ. Բիւրքշեանի աշխատութիւն-
ները մեծ լոյս պիտի սփռեն Հա-
յաստանի փառաւոր անցեալի և
նրա հիմնալի ճարտարապետու-
թեան վրա, որի մէջ հայ մարդու
հանճարը երևան է գալիս իր բո-
լոր արհեստագիտական ուժով: Եւ
պատուելի լուսանկարը այդ իսկ
նպատակով պատրաստում է իր
պատկերները, որ ներկայացնէ հը-
նագէտների Ժողովին:

Պատկերների թիւը հասնում
է մինչև վեց հարիւրի. նրանք,
բացի Անիի աւերակներից, ստն-
ված են և Արշակունեաց ժա-
մանակների հնութիւններից. կան
և մի բանի բեւեռազիր արձանա-
գրութիւնների լուսանկարներ, կան
կործանված բերդերի և պալատ-
ների տեսարաններ:

Պ. Բիւրքշեանը նպատակ ու-
նի իր պատկերներից կազմել մի
ամբողջ ալբոմ՝ հանդերձ պատմա-
կան, հնագիտական տեղեկութիւն-

ներով, և արխիտեկտուրայի բա-
ցատրութիւններով: Չը գիտենք
որքան կը յաջողվի նրան այդ վեր-
ջին նպատակը, որովհետև մեր
բարձր ուսում ստացած ճարտա-
րագէտներից, գոնէ մէկին էլ չենք
ճանաչում, որ օգնէր նրան, որ
հետաքրքրվէր այսպիսի «չնչին բա-
ներով», որոնց մէջ ոչ նիւթական
շահ կայ և ոչ արտօնութիւն...

Յ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Եթէ ուշադրութեամբ կարդալու լինե՞ք
մեր պարբերական հրատարակութեանց գա-
ւառական թղթակցութիւնները, և մի քննո-
ղական հայացք ձգե՞ք նոցա բովանդակու-
թեանը, մենք կը տեսնե՞ք, քիչ բացառու-
թեամբ, որ մեր գաւառական թղթակցու-
թիւնների մեծ մասը վերաբերվում են հա-
սարակաց խորհրդանների, անձնական, ետական
նախանձին, և թշնամական տակութեանը:
Մի և նոյն ժամանակ, այդպիսի թղթակցու-
թիւնները սքողվում են անաչառ. թղթակց-
ութեանց՝ դիմակի տակ: Այդպիսի թղթ-
ակցութիւնների արդիւնքը այն է լինում,
որ կոտորելով մամուլի անունը, ի չար գործա-
ծելով նրա հաւատարմութիւնը և շփոթե-
լով հասարակաց կարծիքը, լրագրական էջնե-
րում լցվում են միմեանց հակառակ բովան-
դակութեամբ անվերջանալի յօդուածներ, ո-
րոնց արժանաւորութիւնը դառնում է նոյն
իսկ խմբագրապետների միմեանց դէմ լարված
դրութիւնը: Այդ դէպքում գրականութեան
և լրագրի պատիւը ամբողջ առաջ կորցնում
է իր արժանաւորութիւնը, որովհետև ամբո-
ւր, որքան էլ անտարբեր լինէ՞ր դէպի տպա-
գրական խօսքը, այնու ամենայնիւ մի բնական
գայութիւն կը զգայ իր մասին արած զրպար-
տութիւնների դէմ: Եւ այդ երևոյթը կը վեր-
ջանայ մեղանում այն ժամանակ, երբ թղթ-
ակցութիւնները կը ձանաչեն գրականական
ազնուութիւնը, ձշմարիտ հասարակաց շուշը, և
հետեւապէս ազգային լրագրութեան պատկա-
ռելի պաշտօնը: Այժմ ազգի կարիքը պա-
հանջում է լրագրական խօսքերով արծարծել
ամբողջ մէջ ազգայնութեան գաղափարը, և
այդ գաղափարը ընդհանրացնել ամբողջ գա-
ւառան մասերի մէջ: Ներկայ ազգային վիճակի
պահանջում է լուսաւորութեան անունով
ազգային միութիւն կազմել հայ—ազգի բա-
ժանալ մասերի մէջ, արմատացնել այդ գա-
ղափարը և մշակել նրան բարոյական հի-
մունքների վրա: Այդ գաղափարը պէտք է
ըմբռնեն լրագրական թղթակցութիւնները,
որոնք Ժողովրդի թարգման դառնալով, ար-
ծարձեն ընդհանուր ազգի խորհրդածու-
թիւնները: Թէև լրագրութիւնը, շատ անգամ
իր առաջնորդող յօդուածներով յարուցանում
էր կրօնի և ազգութեան խնդիրը, բայց այդ

պատճառով: Այդ կէս դարվայ ընթացքում
Բելգիան խաղաղ ծանապարհով կարողացաւ
պատուաւոր անդ ստանալ եւրոպական ժո-
ղովուրդների ընտանիքի մէջ: Բելգիական
ազգային այդ տօնը, որ նուիրված է ժողո-
վորդի նիւթական և բարոյական խաղաղ
առաջադիմութեան յիշատակներին, նշանա-
կութիւն ունի ոչ թէ միայն Բելգիայի հա-
մար, ոչ թէ միայն իւրաքանչիւր ազգի և
պետութեան համար, որ հասկանում է
պատմական փորձի նշանակութիւնը և որ
անհրաժեշտութիւն է զգուշանալ օրի-
նակներից օգուտ քաղել: այլ ամբողջ աշխար-
հի համար: Դա ազատութեան տօն է, որ
ամբողջ աշխարհի համար թանգազին է:
Բելգիան մի փոքրիկ պետութիւն է և
շրջապատված է այնպիսի տարրերով, որոնք
պատրաստ են յաջող դէպքին վերջ դնել
նրա անկախ գոյութեանը և որոնց դէմ նա
միայն 100,000 զինուոր կարող է դուրս
բերել: Այդ փոքրիկ Բելգիան հսկայական
քայլերով առաջ է գնում նիւթական և
բարոյական բարօրութեան ծանապարհի վրա:
Խնչի մէջն է ծածկված այդ մշտական
զարգացման գաղտնիքը: Խնչի մէջն է այն գաղտ-
նիքը, որ ահագին քանակութեամբ զօրքեր
ունեցող եւրոպական ոչ մի պետութիւն
չէ համարձակվում ձեռնամուխ լինել թոյլ
Բելգիայի անկախութեանը:
Այդ գաղտնիքը ժողովրդական մտաւոր
ոյժերի զարգացումն է և այդ ժողովրդի
գիտակցական պետական կենսին է:
1815 թուականին Վիեննայի դաշնագրի
հիման վրա, իբրև նահանգ Զօլանդիայի
հետ միացրած, Բելգիան 15 տարիների
ընթացքում համարուեալ էր միջազգային այդ
անկախութեամբ իր վրա դրած անտանելի լու-
ծը: Զօլանդիայի թագաւորը ոչ թէ միայն ոչինչ
չէր գործեց բելգիացիներին իրանց անտանելի
կրութեան հետ հաշտեցնելու համար, այլ
ընդհակառակը աւելի էլ սաստկացրեց
նրանց թշնամութիւնը դէպի հօլանդացիք:
Բելգիան չէր կարողացաւ հաշտվել Զօլանդիա-
յի տիրապետութեան հետ: Ժամանակը և
լաւ կառավարութիւնը գուցէ մի ժամանակ
անհետեցնէին այդ թշնամութիւնը, բայց
Զօլանդիայի թագաւորը չէր կամեցաւ սպասել
Ժամանակի բնական ընթացքին: Նա բա-
ցարձակ ոյժը աւելի լաւ համարեց և բել-
գիացիք միշտ զգում էին այդ ոյժի ձեռնու-
մը: Ամբողջ վարչութիւնը հօլանդացիների ձեռ-
քին էր, Բելգիայի բոլոր շահերը զոհվեցան
Զօլանդիայի շահերին: Զօլանդիայի պարսքերի
մեծ մասը Բելգիայի վրա դրվեցաւ և ամե-
նասերեակցային սահմանադրութիւնը սրա-
շուով էր բելգիացիների յարաբերութիւնը
դէպի Զօլանդիայի թագաւորը:
Այսպիսի դժուար դրութեան մէջ էր Բել-
գիան, երբ 1830 թուականի Փրանսիական
ընդհարմութիւնը Փրանսիական գահի վրա
հաւանական փոխարինեց: Նոր թագա-
ւորի ազատամիտ անունը կենդանացրեց բել-
գիացիների յոյսերը:
Կղերական և ազատամիտ կուսակցութիւն-
երի կռիւները Բելգիայի պատմական պակա-
ւութիւն էին կազմում և ներքին երկպառա-
ւութեան պատճառ էին դառնում: Կաթո-
լիկ ուժեղ կուսակցութիւնը միշտ կարողա-
ւում է հաշտվել իւրաքանչիւր կառավարու-
ման հետ, եթէ նա չէ խլում այդ կուսակ-
ցութեան արտօնութիւնները: Հոգեւոր ուսում-
նարանների փակելը, հոգեւորականների
սպառնալիքները, որոնք չէին կամենում երգի-
լանդիայի թագաւորին, իբրև բողոքական
թագաւոր, միացրին բելգիական երկու կու-
սակցութիւններին:
Փրանսիայից արտաքսված մի քանի ազատա-
տուր օգուտ քաղեցին Կարլ X-ի անկու-
նը և մասնացրեց լինելով Լիւդովիկ-Ֆրիդի-
կա, որի օգնութիւնը Բելգիայի ազա-
ւութեան համար կարելի էր ապահոված

համարել, կարողացան իրանց հայրենակից-
ների ազգասիրութիւնը զարթեցնել: Մի
ամիս չանցաւ Փրանսիայի կառավարութեան
փոխվելու օրից, երբ Բրիտանի մէջ 1830 թ.
օգոստոսի 24-ին օտար կառավարութեան
դէմ թշնամական ցոյցեր կատարվեցան: Այդ
օրը բելգիացիք հրաժարվեցին տօնել Զօլան-
դիայի թագաւորի ծնունդը: Միւս օրը ար-
քունական թատրոնում խաղացվում էր «Պո-
տիշի համրը» օպերան: Նկարագրողներին
ապստամբութեան պատկերը Բելգիայի ժո-
ղովրդական շարժման նշանը դարձաւ: Փա-
ռօնի մէջ եղած բելգիացիք ոգևորված աղա-
ղակներով ընդունեցին այդ պատկերը, իսկ
թատրոնը շրջապատող ժողովուրդը նրանց
արձագանք տուեց: Պառնոսական լրագրի
խմբագրութիւնը, պօլիցիական վարչութիւնը,
գաղտնականները, արքայութեան մինիստրի
բնակարանը մի բոլորում քանդվեցան ժողով-
րդից: Արքունական գրքանիւնը և վարդապետ-
ները նոյնպէս ոչնչացան: Ամեն տեղ ժողով-
րդական զօրքեր և հաւաքական ապահովու-
թիւնը պահպանող մասնաժողովներ կազմվե-
ցան: Զօլանդական զօրքերը յաղթվեցին
բելգիական ժողովրդական զինուորներից:
Բելգիայի վիճակը որոշում համար Լօն-
դոնի մէջ եւրոպական պետութիւնների ներ-
կայացուցիչների կօնֆերանցիա կազմվեցաւ,
որ երկար բանակցութիւններից յետոյ բել-
գիական ազգային մասնաժողովի հետ, յայտ-
նեց Բելգիայի անկախութիւնը:
Բելգիացիք իրանց համար թագաւոր ընտ-
րեցին, որ 1831 թ. յուլիսի 21-ին հան-
դիսով մտաւ Բելգիայի մայրաքաղաքը, եր-
բայց հաւատարիմ մնալ սահմանադրու-
թեանը, որին մինչև մահ երբէք չէր դաւա-
նանք:
Այդ ժամանակից քարոզէն կէս դար է ան-
ցել, տասնեակներով կղերական և ազատա-
միտ կառավարութիւններ են փոխվել, բաւա-
րան դժուարութիւններ և փորձեր են
թարկվեց այդ փոքր երկրը, բայց նրա պե-
տական կենսին ամենածանր բոլորներում
անգամ իր սահմանադրութեան հիմնական
սկզբունքները—իւր ձի և խօսքի ազատու-
թիւնը երբէք խախտված չեն: Այս Լիւդովի-
կ-Ֆրիդիկայի խորհուրդները, ոչ հզօր Նա-
պոլէօն III-ի սպառնալիքները չէր կարողա-
ցան ստիպել բելգիական թագաւորին սահ-
մանափակել ժողովրդական իրաւունքները:
Թագաւորների ունեցած հատարմութիւնը
դէպի սահմանադրութիւնը և նրա յարգանքը
դէպի ժողովրդի իրաւունքները ազատե-
ցին Բելգիային այնպիսի անկարգութիւններից,
որոնք կարող էին վնասել նրա անկախու-
թեանը անգամ: 1848 թուականի յուլա-
փոխական փորձերը անաջող հետևանքներ
ունեցան, որովհետեւ ժողովրդից սկիզբ
թագաւորը աւելի լաւ համարեց թողնել իր
գահը, քան թէ պաշտպանել նրան զենքով
ժողովրդի ցանկութեան հակառակ:
Կղերական և ազատամիտ կուսակցութիւն-
ների երբէք չընդհատված վեճերը չէր կա-
րողացան իրական աղեղնութիւն ունենալ
սահմանադրութեան հիմնաքննի վրա, ոչ
թէ միայն ազատամիտները, այլ և կղերական-
ները, երբ այս վերջինների ձեռքին է եղել
կառավարչական զեկը, միատեսակ աղեղն-
ութեամբ պաշտպանել են իւր ձի և մամու-
լի ազատութիւնը: Մինչև անգամ այս-
պէս անուանված «կաթոլիկական հաշտու-
թեան» մինիստրութիւնը, որ միատեսակ
ատենի էր թէ ազատամիտ և թէ կղերական
կուսակցութեանը, կարողացաւ պաշտպանել
ազատական խօսքի ազատութիւնը, չէր
նայելով հզօր Նապոլէօն III-ի սպառնալիք-
ներին, որ պահանջում էր յետ տալ Փրան-
սիային ժակն եղբայրներին, որոնք Նապոլէօ-
նի կենսին ձեռնամուխ էին եղել: Կղերա-
նայի այդպիսի փորձերն էլ 1875 թուա-
կանին անաջող անցան:

Բելգիական ազատամիտ կառա-
վարութիւնը իշխանութիւն ստացաւ 1878
թ. յուլիսի 20-ին և մեծ հեղինակութիւն
ունի: Կառավարութեանից պաշտպանված
ազատ խօսքը և մամուլը անշնորհակալ չէր
գտնվեցան դէպի իրանց հովանաւորող երկիրը:
Նւրբայրում սերմանված անկարգութիւնները
և շփոթները, անիշխանութեան և կոմունայի
վարդապետութիւնները չէր կարողացնում Բել-
գիայի մէջ, նոյն Բելգիայի մէջ, որտեղ նրանք
կարող էին բոլոր միւս երկրներից աւելի
ազատ հնչվել և չէր պատժվել:
Մամուլի ազատութիւնը նիւթականապէս
թոյլ Բելգիայի բարոյական ոյժի աղբիւրներից
մէկն է: Միւս աղբիւրները՝ ժողովրդական
կրթութեան ահագին զարգացումն է:
1848 թուին Բելգիայի ազգային ուսում-
նարանների մէջ սովորում էին 450,000 երե-
խաներ և 190,000 հասակաւորներ, 1870
թուականին առաջինների թիւը 600,000-ի,
իսկ երկրորդների թիւը 217,000 հասաւ: Այժմ
այդ թուանշանները աւելի էլ բարձրացել են:
Ամբողջ ազգաբնակչութեանից կարգաւ և գրեւ
գիտեցողները 80% են կազմում: Ժողովրդա-
կան լուսաւորութեան համար արած ծախ-
սերի շատանալը ակներև է դարձնում նրա
զարգացման աստիճանը: 1876 թուականի
բիւզեթի համեմատ որոշված էր ժողովր-
դական լուսաւորութեան համար 8,197,000
ֆրանկ ծախսել, նոյն նպատակի համար 1879
թուականի բիւզեթը որոշում է 14,254,599
ֆրանկ: Նրեք տարվայ ընթացքում կրթու-
թեան համար արած ծախսերի քանակու-
թիւնը 6,057,599 ֆր. շատացաւ. գրեթէ
երկու անգամ:
Խնչուի բարկութեամբ և նախանձով պէտք
է նայել այժմ այդ փոքր պետութեան առա-
ջադիմութեան վրա այն մարդիկ, որոնք պե-
տական հանգստութեան զրաւակներ ժողո-
վրդի աղիտութիւնն են համարում: Դա-
տուութիւններին նրանք պատասխանում էին,
բայց ակներև օրինակին անկարելի է պա-
տասխանել: Նոյն իսկ այդ մարդիկ, խաւարի
և ստրկութեան այդ պաշտպանները Բել-
գիային կորուստ էին նախադրեալու, որով-
հետեւ նա աւելի լաւ համարեց լոյսը, քան
թէ խաւարը, ազատութիւնը, քան թէ շրջ-
թաները և ստրկութիւնը: Այսպիսի օրինակի
առաջ խաւարի այդ պաշտպանները պէտք է
լռեն:
Բելգիական ժողովուրդը հպարտութեամբ
կարող է տօնել իր անկախութեան 50 ամեայ
յօրելանի հանդէսը, որովհետեւ նա խաղաղ
յաղթութիւն է մարդկային մարտի և ոչու-
կողմից յղծի դէմ, ճշմարտութեան, զարեւո-
րանապաշարմունքի դէմ, օրինաւորութեան
կամայականութեան դէմ: Յանկանեց այդ
աշխատող ժողովրդին նոր աջօղութիւններ
իր ազատ կենսին ասպարիզի վրա: Նրա
աշխատանքները և օրինակը առանց հետե-
ւանքի չեն մնայ մարդկութեան համար:

Ամբողջ քաղաքը թնդաց կեցեցների ձայներով,
Յետոյ մին միւսից յետոյ անցան ամեն երկրների
որսորդները իրանց զրօշակներով և իրանց հետ բե-
րած երաժշտական խմբերով:
Բոլորից բաղմախիւ և գեղեցիկ հագուստներով
ու տեւքով էին չվեղացի որսորդները, որոնց ժո-
ղովուրդը մեծ համակրութեամբ ընդունեց: Շա-
տերը ժողովրդից իրանց զխաղկներն ու թաշկի-
նակները կորցրին: Ոչ սակաւ գրաւել էին ար-
բօցի որսորդները իրանց գոյնզգոյն հագուստնե-
րով: Բոլորից յետոյ անցան առհասարակ Աւստ-
րիայի և մասնաւորապէս Վիեննայի որսորդները
ներքոյ Ալբրէխտի և իր ամուսնու առաջնորդու-
թեամբ: Ժողովրդի գոռում և գոչումը չափ և
սահման չունէր: Վերջապէս անցան քաղաքային
վարչութեան ներկայացուցիչները:
Հանդէսը գումարվեցաւ մի մեծ հրապարակի
վրա ծրանց-Յովսէփի անունով կառուցված զօրա-
նոցի հանդէպ: Տասն բալէից յետոյ յայտնվեցաւ
կայսրը Նոբլին մեծութեան կայսրուհու հետ, ժո-
ղովուրդը մեծ բերկրութեամբ ընդունեց իր թա-
գաւորին:
Այն ժամանակ տասն և երկու հազար որսորդ-
ները գունդ գունդ դիմեցին քաղաքից դուրս մի
մեծ դաշտի վրա և այնտեղ սկսեցին զանազան
որսորդական փորձեր և հրաձգութիւններ անել:
Որսորդների ճարպկութիւնը և նրանց յաջողա-
կութիւնները նայողների վրա զարմաց էին աղ-
ղում: Ամենաաջողակները ստացան թանգազին
մրցանակները, որ պատրաստել էր Վիեննայի քա-
ղաքային զանձարանը: Դրանից յետոյ արվեցաւ
փառաւոր և մեծահանդէս ճաշ, որտեղ հրաւր-
ված էին Վիեննայի զինուորական և քաղաքական
աստիճանաւորները:
Ինձ զարմացրեց այն, որ ես չէր տեսայ այդ զա-
նազան երկրներից եկած որսորդների թուով Ռու-
սաստանի որսորդների ներկայացուցիչներից ոչ
մինը: Մի գերմանացի ինձ ասեց, այդ այն պատ-
ճառով է, որ Ռուսները չունեն որսորդական կազ-
մակերպված ընկերութիւններ, ուրեմն չունեն և
հմուտ որսորդներ:
Այդպիսի հանդէսներ կրկնվում են տասն և եր-
կու տարի մի անգամ Նւրբայրի այդ և այլ մայ-
րաքաղաքների և մեծ քաղաքների մէջ, Աւետրոյ
չեմ համարում ասել, որ յիշեալ հանդիսին ներ-
կայացել էին որսորդներ մինչև անգամ Ամերիկայի
Միացեալ Նահանգներից և Ամերիկայի միւս հան-
րապետութիւններից:
Միտոս արեւնով լցվում էր երբ մտածում էի որ
խեղճ հայի անունը երբէք չէ յիշում այս տեսակ
համալսարանային հանդէսներում: Արդեօք ինչ բանի
մէջ պէտք է յայտնվի հայ մարդը:
Հ. Արմենյան

ՄԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 13 յուլիսի: Բ. Դրան պատաս-
խանը պետութիւնների զրուցեանը երէկ
ուղարկվեցաւ: Բ. Դուռը մերժում է Բերլի-
նի կօնֆերանցիայի որոշած սահմանը, հա-
մաձայն է բանակցութիւնների սկսել սահման-
ները ուղղելու մասին, բացառելով Նանինա,
Մեյցելօ և Լարիսա:
ՓԱՐԻՉ, 14 յուլիսի: «Rappele» լրագիրը
հաղորդում է իբրև լուր, որ Վիկտորիա
թագուհին մի նամակով խորհուրդ է տուել
սուլթանին ընդունել Բերլինի կօնֆերանցիայի
վճիռը:
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յուլիսի: Պետական բան-
կի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
94 ռ. 12 կ., երկրորդ 91 ռ. 87 կ., երրորդ
93 ռ. 50 կ., չորրորդ 93 ռ. 12 կ., ներքին
5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ
223 ռ. 50 կ., երկրորդ 222 ռ. 75 կ., ա-
րեւելեան առաջին փոխառութեան տոմսակը
արժէ 91 ռ., երկրորդ 91 ռ., երրորդ 90 ռ.,
75 կ., ոսկի 7 ռ. 83 կ.: Ռուսաց 1 ռուբլ
Լոնդոնի վրա արժէ 25 1/3 պէնս, Ռուսաց
100 ռ. Համբուրգի վրա արժէ 214 մարկ,
Փարիզի վրա 267 ֆր. 75 սանտիմ: Բօրսայի
տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

